

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՈՒՐԳԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Մամիկոնյան Կ.Հ. , Սյրեփանյան Լ.Ս.

Փորձաքննությունների ազգային բյուրո,
Երևան, Հայաստան

Ֆինանսական բուրգերը ժամանակակից ֆինանսական համակարգում խարդախության առավել տարածված ձևերից են, որոնք էական բացասական ազդեցություն են ունենում ներդրողների տնտեսական կայունության և ֆինանսական շուկայի վրա՝ ընդհանուր առմամբ: Այս երևույթի առավել ինստիտուցիոնալացված ձևերում մասնակիցներին եկամուտների վճարումն իրականացվում է ոչ թե իրական տնտեսական գործունեության, այլ բացառապես նոր ներգրավված մասնակիցներից ստացվող միջոցների վերաբաշխման հաշվին (Պոնցիի սխեմա): Որպես կապիտալի վերաբաշխման փակ համակարգ՝ նման մոդելը կարող է գործել միայն նոր դրամական միջոցների մշտական ներհոսքի պայմաններում և չունի տնտեսական արժեք ստեղծող ինքնուրույն մեխանիզմներ:

Հոդվածում առանձնահատուկ կարևորվում է ֆինանսական բուրգի՝ որպես տնտեսական երևույթի նույնականացման չափանիշների բացահայտումը: Միաժամանակ, հիմնավորվում է դրա բնորոշման տնտեսագիտական ու իրավական առանձին օրենսդրական սահմանումների կիրառման անհրաժեշտությունը: Միջազգային գիտական հրապարակումների և իրավական կարգավորումների արտասահմանյան փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ ֆինանսական բուրգերի դեմ պայքարը կարող է արդյունավետորեն իրականացվել սպառողների իրավունքների պաշտպանության, բարեխիղճ մրցակցության ապահովման, ինչպես նաև դատական իրավակիրառ մեխանիզմների միջոցով: Հեղինակները հանգում են այն եզրակացության, որ նման գործունեության կանխարգելումը և խափանումը նպատակահարմար է իրականացնել առավելապես քաղաքացիաիրավական և տնտեսաիրավական տիրույթում՝ դրա դրսևորման վաղ փուլերում՝ նախքան քրեաիրավական միջամտության հիմքերի առաջացումը:

Թղթակցական հասցեն՝ Մամիկոնյան Կարեն Հովհաննեսի, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի գիտական հետազոտությունների և տեխնիկական փորձարկումների համակարգման բաժնի պետ, տնտեսագիտական և հաշվապահական փորձաքննությունների բաժնի փորձագետ, Հայաստան, ք.Երևան, Իսակովի պող., 24, e-mail: mamikonyankaren@gmail.com

Բանալի բառեր. Ֆինանսական բուրգ, Պոնցի սխեմա, տնտեսական երևույթ, սպառողների պաշտպանություն, տնտեսաիրավական կարգավորում, կանխարգելում:

Հետազոտության առարկայի գիտական սահմանումը և տեսական հիմքերը

Ֆինանսական բուրգերը (*financial pyramid schemes*) ֆինանսական շուկաների խարդախության դասական ձևեր են, որոնք ունեն համակարգային բնույթ և էական ազդեցություն ֆինանսական կայունության վրա: Սակայն ֆինանսական խարդախության ինստիտուցիոնալացված ձևը՝ Պոնցի սխեման է, որի դեպքում ներդրողներին խոստացված եկամուտները ձևավորվում են ոչ թե իրական տնտեսական գործունեությունից, այլ նոր ներդրողների միջոցների վերաբաշխման հաշվին: Ակադեմիական գրականության մեջ Պոնցի սխեման սահմանվում է որպես «վերաբաշխման վրա հիմնված փակ ֆինանսական համակարգ, որը գոյատևում է միայն նոր կապիտալի ներհոսքի պայմաններում և չունի ինքնուրույն արժեք ստեղծող հիմք»: Ժամանակակից ակադեմիական գրականության մեջ Պոնցի սխեման սահմանվում է որպես այնպիսի ներդրումային խարդախություն, որտեղ նոր ներդրողների միջոցներն օգտագործվում են նախկին ներդրողներին վճարելու համար՝ առանց իրական տնտեսական արժեք ստեղծելու: Այս համատեքստում կարելի է առանձնացնել Պոնցի սխեմայի հետևյալ հիմնարար հատկանիշները.

- բարձր և ոչ իրատեսական եկամտաբերության խոստում,
- իրական ներդրումային գործունեության բացակայություն,
- հոսքային կախվածություն նոր ներդրումներից,
- անխուսափելի կոլապս:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ նման սխեմաները կառուցվածքային առումով «ինքնավերացող համակարգեր» են, քանի որ դրանց կայունությունը կախված է ներդրողների թվի էքսպոնենցիալ տեմպերով աճից, որը երկարաժամկետում անհնար է ապահովել:

Ֆինանսական բուրգերի և Պոնցի սխեմաների միմյանցից տարբերակումը գիտական գրականության մեջ հստակ է.

Պոնցի սխեմաների դեպքում

- առկա է կենտրոնացված կառավարման մոդել (ղեկավարվում է մեկ կազմակերպչի կամ սահմանափակ խմբի կողմից),
- ներդրողները չունեն տեղեկատվություն իրական գործունեության մասին,
- հայտարարվում է բարձր և կայուն եկամուտ (օրինակ՝ 20-50% ամսական)
- եկամուտը չի բխում իրական ներդրումային արդյունքից (նոր ներդրողների միջոցներն ուղղվում են նախկին ներդրողներին):

Ֆինանսական բուրգերի դեպքում

- առկա է ապակենտրոնացված կամ կիսաապակենտրոնացված կառուցվածք,
- պահանջում է մասնակիցների ակտիվ ներգրավում (*recruiting*),

- եկամուտը կախված է նոր մասնակիցների ներգրավումից,
- մասնակիցները միաժամանակ հանդես են գալիս որպես նոր մասնակիցների ներգրավողներ [1]:

Հրապարակված գիտական հետազոտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ Պոնցի սխեմաները ինքնավերացող, ոչ կայուն ֆինանսական համակարգեր են, որոնք հիմնված են նոր ներդրումների մշտական ներհոսքի վրա և չունեն իրական տնտեսական արժեք ստեղծող հիմք: Իսկ բուրգային սխեմաները հաճախ գործում են «ցանցային մարկետինգի» (օրինակ՝ MLM-ի) քողի տակ և ունեն սոցիալական տարածման մեխանիզմներ: Ֆինանսական բուրգերի կառուցվածքային կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ այս դեպքում ձևավորվում է ինքնավերարտադրվող ընդլայնվող ցանց [2]: Բայց, իհարկե, մաթեմատիկական մոդելավորման դեպքում ակնառու է, որ համակարգը կայուն է միայն այն դեպքում, երբ նոր ներդրումների հոսքը գերազանցում է պարտավորությունների աճը, հակառակ դեպքում՝ տեղի է ունենում կոլապս:

Հետազոտության համակարգային խնդիրը

Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև բազմաթիվ զարգացող երկրներում, ըստ ժամանակակից գիտական ուսումնասիրությունների, պահպանվում է ֆինանսական բուրգերի և Պոնցի սխեմաների նկատմամբ իրավական սահմանման և կարգավորման անբավարարություն, ինչն էապես խոչընդոտում է այդ երևույթների արդյունավետ կանխարգելումն ու հակազդումը: Գիտական գրականության համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնական համակարգային խնդիրներն են.

- միասնական և հստակ իրավական սահմանման բացակայությունը,
- բուրգային և Պոնցի սխեմաների քողարկված և հիբրիդային ձևերի տարածումը,
- իրավական կարգավորման բազմաշերտությունը (քաղաքացիական, քրեական և վարչական իրավունքի համաժամանակյա կիրառություն), որը հաճախ հանգեցնում է կարգավորող անորոշությունների և իրավակիրառական բարդությունների [3]:

Միաժամանակ, միջազգային գիտական հետազոտություններն առաջարկում են մի շարք ինստիտուցիոնալ և իրավական բարեփոխումներ, մասնավորապես՝

- ֆինանսական բուրգերի և Պոնցի սխեմաների դեմ պայքարի համար հատուկ քրեական իրավական նորմերի ներդրում,
- ֆինանսական վերահսկողության և վերահսկող մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների ուժեղացում,
- կանխարգելիչ և հետաքննող գործիքակազմերի համալիր կիրառություն՝ ուղղված նման սխեմաների վաղ հայտնաբերմանը և ռիսկերի նվազեցմանը:

Այնուամենայնիվ, հարկ է ընդգծել, որ վերոնշյալ համակարգային խնդիրները պայմանավորված են նաև ֆինանսական բուրգերի տնտեսագիտական բնութագրման

և քաղաքացիաիրավական նորմերում դրանց հստակ սահմանման բացակայությամբ: Այսինքն՝ ներկայումս իրավաբանորեն սահմանվում են միայն այն գործողությունները, որոնք հանգեցնում են քրեորեն պատժելի արարքների նույնականացմանը, մինչդեռ *ֆինանսական բուրգի՝ որպես տնտեսական երևույթի բնութագրումն ու սահմանումը պետք է իրենց արտացոլումը գտնեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքում:*

Այսինքն՝ գործող իրավակարգավորումները կենտրոնացած են բացառապես քրեորեն պատժելի արարքների նույնականացման վրա, մինչդեռ ֆինանսական բուրգի՝ որպես տնտեսական երևույթի կանխարգելումը պահանջում է դրա նախնական բովանդակային ամրագրումը ՀՀ քաղաքացիական օրենսդրությունում: Վերոնշյալը փայլուն կերպով հիմնավորում է քրեական իրավունքի «Վերջին միջոցի» (*Ultima Ratio*) սկզբունքը: Եթե երևույթը սահմանված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում որպես արգելված տնտեսական վարքագիծ, ապա ՀՀ քրեական օրենսգիրքը ստիպված է լինում կատարել «սևագործ» աշխատանք, սակայն առանց տնտեսագիտորեն համակողմանի և ամբողջական սահմանման: ՀՀ քրեական օրենսգրքի 282-րդ հոդվածով սահմանված դրույթը հետևյալն է՝ «Սույն օրենսգրքի իմաստով՝ ֆինանսական բուրգը գույքի ներգրավմանն ուղղված գործունեություն է (բացառությամբ հատուկ թույլտվության (լիցենզիայի) հիման վրա իրականացվող գործունեության), որով գույք ներդրողին կամ ֆինանսական բուրգում առաջարկվող գույքի կամ ծառայության դիմաց վճարում կատարող անձին առաջարկվող նյութական օգուտը պայմանավորվում է բացառապես նոր ներդրողների ներգրավումից ստացված գույքի հաշվին՝ առանց նշված գույքն իրական ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու մտադրության» [4]:

Սակայն ՀՀ քրեական օրենսգիրքը չպետք է լինի ֆինանսական բուրգի միակ «սահմանողը»: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը պետք է տա տնտեսական վարքագծի կանոնը, իսկ ՀՀ քրեական օրենսգիրքը՝ պատիժը այդ կանոնը կոպտորեն խախտելու համար: Երբ ֆինանսական բուրգը բացակայում է Քաղաքացիական օրենսգրքում, ստացվում է մի իրավիճակ, որտեղ տնտեսական գործունեությունը «լեգալ» է այնքան ժամանակ, քանի դեռ այն չի դարձել «հանցագործություն»: Քաղաքացիաիրավական արգելքը թույլ է տալիս իրավաբանորեն անվավեր ճանաչել նման գործարքները հենց սկզբից (որպես օրենքին հակասող), ինչը պաշտպանում է սպառողին նախքան փողերի կորուստը: Քրեական օրենսգիրքը, չունենալով քաղաքացիաիրավական հիմք, ստիպված է լինում ապացուցել «հանցավոր մտադրությունը» կամ «խարդախությունը», ինչը շատ ավելի բարդ է, քան պարզապես փաստելը, որ գործունեությունը չի համապատասխանում քաղաքացիական օրենքով սահմանված տնտեսական չափանիշներին:

Ֆինանսական բուրգերի իրավական կարգավորման հայեցակարգային վերանայում. միջազգային փորձ և ՀՀ օրենսդրական բարեփոխումներ

«Վերջին միջոցի» սկզբունքը հուշում է, որ պետությունը պետք է քրեական պատիժը կիրառի միայն այն դեպքում, երբ մյուս բոլոր լծակները (քաղաքացիական, վարչական) սպառված են կամ անարդյունավետ: Եթե ֆինանսական բուրգը սահմանվի Քաղաքացիական օրենսգրքում, այդպիսով այն կիրականացնի կանխարգելիչ (պրեվենտիվ) գործառույթ, ինչը պետական վերահսկող մարմիններին հնարավորություն կտա կասեցնել կասկածելի սխեմաները՝ հիմնվելով տնտեսագիտական բնութագրիչների վրա (օրինակ՝ իրական ապրանքաշրջանառության բացակայություն)՝ առանց սպասելու քրեական գործի հարուցմանը:

Պետք է նշել, որ «Ֆինանսական բուրգ» հասկացության միասնական սահմանում որևէ կոնվենցիայում կամ միջազգային այլ պայմանագրում առկա չէ, յուրաքանչյուր երկիր այն սահմանում է իր ներպետական քրեական, քաղաքացիական կամ հակամրցակցային օրենսդրությամբ: Շատ պետություններ ֆինանսական բուրգի օրենսդրական ձևակերպման փոխարեն հասկացությունը նախատեսում են տարբերակող չափանիշների սահմանման միջոցով:

Միջազգային առաջադեմ փորձի, մասնավորապես՝ ԱՄՆ Դաշնային առևտրի կոմիտեի (FTC) և Կանադայի Մրցակցային բյուրոյի գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ ֆինանսական բուրգերի դեմ պայքարը չի սահմանափակվում միայն քրեաիրավական հետապնդմամբ: ԱՄՆ-ում և Կանադայում կիրառվող բազմաֆունկցիոնալ թեստերը, ինչպիսիք են «70 տոկոսի կանոնը» կամ հետզնման երաշխիքների պահանջը, փաստում են, որ խնդիրն ունի նախևառաջ տնտեսական և քաղաքացիաիրավական բովանդակություն: Այս երկրներում հստակ տարանջատված են օրինական բազմաշերտ մարքեթինգը (MLM) և անօրինական բուրգային սխեմաները՝ հիմնվելով իրական ապրանքաշրջանառության և սպառողների շահերի պաշտպանության չափանիշների վրա [5]:

Կանադայում «Մրցակցության մասին» օրենքով սահմանվում են բրգաձև սխեմաներին բնորոշ հատկանիշներ, որոնց ի հայտ գալու դեպքում կազմակերպիչները ենթարկվում են քրեական պատասխանատվության: Ըստ օրենքի հանցագործություն է համարվում՝ մասնակիցների ներգրավումից հատուցում ստանալու իրավունք ձեռք բերելու համար գումարներ վճարելը, նախագծին միանալու իրավունքի համար որոշակի ապրանքներ գնելու պահանջ դնելը, մասնակիցներին ապրանքի՝ առևտրային տեսանկյունից ոչ ողջամիտ քանակ վաճառելը, մասնակիցներին վաճառված ապրանքը ողջամիտ առևտրային պայմաններով հետ ընդունելուց հրաժարվելը [6]:

Համանման դրույթներ տեղ են գտել նաև Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի սպառողների շահերի պաշտպանության հարցերը կարգավորող նորմատիվ իրավական ակտերում: Ի տարբերություն շատ այլ երկրների, Մեծ Բրիտանիայում ֆինանսական բուրգերի դեմ պայքարի իրավական հիմքը սահմանված է «Անբարեխիղճ առևտրից սպառողների պաշտպանության» կանոնակարգով (CPRs),

որը մեկ միասնական փաստաթղթում ներառում է ինչպես սպառողների շահերի պաշտպանության, այնպես էլ անբարեխիղճ առևտրային գործելաոճի արգելման նորմերը [7]:

Այս մոդելի առանցքային առանձնահատկություններն են.

1) Անվերապահ արգելքը. Մեծ Բրիտանիայի օրենսդրությունը սահմանում է 31 տեսակի առևտրային գործունեություն, որոնք համարվում են «բացարձակ անբարեխիղճ» և արգելված են ցանկացած պարագայում: Ֆինանսական բուրգերի ստեղծումը կամ գործարկումը ներառված է հենց այս ցանկում (*Schedule 1, Paragraph 14*): Սա նշանակում է, որ պետք չէ ապացուցել խարդախության մտադրությունը, բավարար է միայն փաստել բուրգային սխեմայի առկայությունը:

2) Նկարագրողական սահմանումը. Մեծ Բրիտանիայի օրենսդրությունը տալիս է երկույթի տնտեսական նկարագիրը. դա մի սխեմա է, որտեղ սպառողը վճարում է մասնակցության հնարավորության համար և ակնկալում է ստանալ փոխհատուցում, որը հիմնականում բխում է համակարգ նոր սպառողներ ներգրավելուց, այլ ոչ թե ապրանքների վաճառքից կամ սպառումից:

3) Վարչական և քաղաքացիական լծակները. մինչ քրեական հետապնդում սկսելը, Մեծ Բրիտանիայի Մրցակցության և շուկաների մարմինը (*CMA*) կարող է կիրառել քաղաքացիաիրավական արգելքներ, դադարեցնել ընկերության գործունեությունը և առգրավել ակտիվները՝ հիմնվելով սպառողների շահերի խաթարման փաստի վրա:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա, ինչպես նշվեց, ֆինանսական բուրգի վերաբերյալ կարգավորումները բացառապես տեղայնացված են ՀՀ քրեական օրենսգրքում, որտեղ բացակայում է վերջինիս բնութագրումը որպես արգելված տնտեսական գործունեություն (282-րդ հոդվածում սահմանվում է ֆինանսական բուրգ ստեղծելու, կազմակերպելու կամ ղեկավարելու վերաբերյալ պատասխանատվությունը): Սա նշանակում է, որ պետությունը բուրգային գործունեությանը արձագանքում է միայն այն փուլում, երբ արարքն արդեն կատարված է և պարունակում է հանցակազմի հատկանիշներ: Սակայն, ինչպես ցույց է տալիս վերը բերված միջազգային փորձը, որտեղ ֆինանսական բուրգերը նաև դիտարկվում են «Անբարեխիղճ առևտրից սպառողների պաշտպանության» կանոնակարգով, «Մրցակցության մասին» օրենքով և դատական նախադեպային որոշումով, առավել արդյունավետ է տվյալ անօրինական գործունեության կանխարգելումը քաղաքացիական կամ տնտեսական իրավունքի տիրույթում՝ նախքան դրա քրեականացումը: Վերոնշյալ վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ ֆինանսական բուրգերի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է փոխել իրավական մոտեցման հայեցակարգը: Ֆինանսական բուրգը չպետք է դիտարկվի սոսկ որպես ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված տնտեսական հանցագործություն: Ինչպես վերը նշվեց, անհրաժեշտ է,

որ բուրգային սխեմաների նկարագրողական բնորոշումը և դրանց տարբերակիչ հատկանիշները ներառվեն նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում:

Ստորև ներկայացվում է ՀՀ-ում բացահայտված ժամանակակից ֆինանսական բրգային դրսևորման (սխեմայի) օրինակներ:

Բացահայտված ժամանակակից ֆինանսական բրգային դրսևորումներ

Առաջին սխեմա. «Տելեգրամ» հավելվածում գործող «ԵԼՈ» անվամբ բոտի կողմից առաջարկվել է անդամագրվել իրենց թիմին, կատարել ներդրում, որից հետո՝ արդեն նոր անդամներ ներգրավելով, անդամագրվածը կարողանում է գումար վաստակել: Ցանցը ներկայացվում է մատրիցային սխեմայով, անվերջանալի: Գործունեության սխեման բաղկացած է տարբեր մակարդակի սեղաններից, որոնց անդամագրվելու գումարներն ամեն հաջորդ մակարդակում ավելանում են: Սեղանները բաղկացած են 15 տեղից, այսինքն, մի սեղանի շուրջ կարողանում է անդամագրվել 15 անձ, որոնց տեղերը սեղանի շուրջ բաշխված են հետևյալ կերպ՝ անդամագրվածներից 8 մասնակից համարվում են «նվիրողներ», 4 մասնակից՝ «ստեղծողներ», 2 մասնակից՝ «կառուցողներ» և 1 մասնակից՝ «ստացող»:

«Ցանցին անդամագրվելու պայմանը՝ առաջին ներդրումն է, որը կազմում է 7000 դրամ: Անձը համակարգին ներգրավվում է իր էլեկտրոնային հավելվածին ստացված համապատասխան հղումով անցնելուց հետո. ձեռք է բերում «նվիրողի» կարգավիճակ, որից հետո պարտավորվում է «ստացողին» փոխանցել համապատասխան գումար: Երբ այդ սեղանի շուրջ լրանում են «նվիրողների» ութ տեղերը, վերջիններիս կարգավիճակը փոխվում է «ստեղծողի», այնուհետև՝ «կառուցողի» և այդպես շարունակ: Ստացվում է, որ յուրաքանչյուր սեղանի շուրջ նոր անդամագրված ութ «նվիրողների» կողմից ներդրված գումարները ստանում է «ստացողը»: Սա նշանակում է, որ ԿՊԿՍ սխեմայի գործողության պարագայում գումար հնարավոր է աշխատել միայն բարձր կարգավիճակում գտնվելու դեպքում, ինչն էլ հնարավոր է միայն նոր անդամներ ներգրավելու միջոցով»:

Սխեմայի գործողության մեկ շրջափուլի ֆինանսական մեխանիզմը, երբ մեկ անձը մեկնարկային սեղանին նվազագույն 7,000 դրամ ներդրում կատարելով, անդամագրվում է սխեմային, անցնում սեղանների բոլոր յոթ մակարդակներով և արդյունքում դառնում տիտանե սեղանի «ստացող», կստացվի հետևյալ կերպ (տե՛ս ստորև բերված աղյուսակը).

Միսեմայի գործողության մեկ շրջափուլի մեխանիզմը

Սեղաններ	Մեկ անձի կողմից ներդրված գումար	Տվյալ սեղանից մեկ անձի ստացած գումար	Տվյալ սեղանից մեկ անձի ստացած եկամույր	Սեղանների 15 անդամներից կադարված ներդրումների ընդամենը գումար	Սեղանից կամակերպիչներին հասանելիք եկամույր
Մեկնարկային	7,000	56,000	49,000	105,000	49,000
«Բրոնզե» սեղան	21,000	168,000	147,000	315,000	147,000
«Արծաթե» սեղան	70,000	560,000	490,000	1,050,000	490,000
«Ոսկյա» սեղան	210,000	1,680,000	1,470,000	3,150,000	1,470,000
«Պլատինե» սեղան	700,000	5,600,000	4,900,000	10,500,000	4,900,000
«Ադամանդե» սեղան	2,100,000	16,800,000	14,700,000	31,500,000	14,700,000
«Տիտանե» սեղան	7,000,000	56,000,000	49,000,000	105,000,000	49,000,000
Ընդամենը	10,108,000	80,864,000	70,756,000	151,620,000	70,756,000

Երկրորդ սխեմա. «Տելեգրամ» հավելվածի «PM» անվամբ համակարգում տեղադրվել են ուսուցողական տեսահոլովակներ, կազմակերպվել են տեսահեռարձակումներ, որոնց ընթացքում հետևորդներին առաջարկվել է՝ ներդրում կատարել վերոնշյալ ցանցում՝ խոստանալով կարճ ժամանակահատվածում ունենալ մեծ ֆինանսական օգուտներ: Տեղադրված ուսուցողական տեսահոլովակներում ներկայացվել է իբրև ցանցային մարքեթինգի գործունեություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ցանցում առկա են թվով 11 մարքեթինգային պլաններ (տարիֆներ), որոնցից վերոնշյալ տելեգրամյան ալիքում օգտագործվում է «Mm» տարիֆը: Տարիֆն ունի 15 փուլից կազմված փուլային համակարգ, որի վերջնարդյունքում հնարավորություն է ընձեռվում վաստակելու 1,5 միլիոն ՌԴ ռուբլուն համարժեք գումար: 15 փուլային համակարգի յուրաքանչյուր փուլում հնարավորություն կա եկամույր ստանալու՝ բացառությամբ 1-ին փուլի, որը կուտակային է և եկամույր չի գոյանում: 2-րդ փուլից սկսած մինչև 15-րդ փուլում ստացվում է եկամույր, բացի այդ, 5-րդ փուլից սկսած յուրաքանչյուր հաջորդ փուլում ստացված գումարից ընկերությունը տրամադրում է նաև լրացուցիչ բոնուսներ: Բացի այդ, ծրագիրը մատրիցային է, այն վերջ չունի, եկամույրներ ստանալը նույնպես չի սահմանափակվում: Մատրիցայում առաջ գնալու և եկամույր ստանալու համար հարկավոր է ներգրավել 2-ից 3 «գործընկեր»: Քանի որ աշխատանքը թիմային է և շատ գումար աշխատելու համար պարտադիր է միմյանց օգնելը, արդյունքում բացի ստացված եկամույրներից անձինք կարող են ստանալ նաև ուղղորդման եկամույր: Յուրաքանչյուր անձից, ով ցանկանում է մուտք գործել ցանց, պահանջվում է կատարել ներդրում, որը կարող է իրականացվել ցանկացած փուլում. 2-րդ փուլի ներդրումը 2.800 ՀՀ դրամ է, 3-րդ փուլինը՝ 4.900 ՀՀ դրամ, 4-րդ փուլինը՝ 8.400 ՀՀ դրամ, 5-րդ փուլինը՝ 14.700 ՀՀ դրամ, իսկ ավելի արագ գումար վաստակելու համար խորհուրդ է տրվում ցանց մուտք գործել ավելի բարձր փուլով»:

Երրորդ սխեմա. «Օ» ընկերության կողմից ֆինանսական հոսքերի կեղծ կառավարման նպատակով ներկայացվող տեղեկատվությունը, տեսանյութերը, դասընթացները, գրքերն ու ֆիլմերը ներդրումային շահավետ ծրագրերի վերաբերյալ են եղել, որոնք առաջարկվել են որպես ձեռնարկատիրական գործունեություն (փաթեթների վաճառք): Գույք ներդրողին կամ կազմակերպությունում առաջարկվող «գույքի կամ ծառայության» դիմաց վճարում կատարող անձանց առաջարկվող նյութական օգուտը պայմանավորվում է բացառապես նոր ներդրողների ներգրավումից ստացված գույքի հաշվին՝ առանց նշված գույքը իրական ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու մտադրության: Գործողության մեջ դրված հատուկ մեխանիզմների և լծակների միջոցով հավաքագրվել են նոր անդամներ՝ իրենց ներդրումներով հանդերձ, որն էլ անվանվել է «բարձրակարգ հյուրանոցային փաթեթների վաճառք»:

«Ընկերության գործունեության վերաբերյալ՝ վերջինիս կողմից տեղադրված տեսանյութերում մանրամասն ներկայացվել են մեխանիզմներ, որոնք հստակ մատնանշել են, որ կազմակերպության գործունեությունն ամենևին էլ տուրիստական հանգստի փաթեթների վաճառք չէ, այլ նոր անդամներ ներգրավելու միջոցով ֆինանսական միջոցների հավաքագրումն է, որը խրախուսվում է մշակված բոնուսային համակարգով: Կազմակերպության անդամի (IBO) եկամուտը, որը բաղկացած է կազմակերպության կողմից տրվող բոնուսներից և միջնորդավճարներից, ուղիղ համեմատական է կազմակերպության բինար սխեմայում այդ անդամի զբաղեցրած դիրքին (իրենից հետո թե քանի ճյուղեր և մակարդակներ են իջնում): Այսինքն, յուրաքանչյուր անդամի եկամուտը գոյանում է բացառապես նոր անդամներ հավաքագրելուց և նոր անդամների կողմից կատարվող ֆինանսական մուտքերի հաշվին: Դիտարկվել է, որ որքան վերևում է տեղակայված անդամի զբաղեցրած դիրքը բրգաձև սխեմայի կառուցվածքում, այսինքն՝ որքան ավելի շատ անդամներ են հավաքագրվել և որի հաշվին էլ ավելացել են տվյալ անդամի դիրքից ներքև գտնվող ստորին մակարդակները, այնքան ավելացել են տվյալ անդամի բոնուսային եկամուտները»:

Պարզվել է, որ «Օ» ընկերության կողմից հավաքագրված 9,188,590 ԱՄՆ դոլար գումարից՝ 3,874,455 ԱՄՆ դոլար գումարը, որը կազմել է ընդհանուր գումարի 42.17 տոկոսը, բաշխվել է որպես միջնորդավճար և պարգևավճար, իսկ 2,604,835 ԱՄՆ դոլար գումարի չափով՝ փոխանցվել է հյուրանոցային փաթեթների ամրագրման համար, որը կազմել է ընդհանուր հավաքագրված գումարի 28.35 տոկոսը: «Օ» ընկերության կողմից իրականացված գործունեության արդյունքում հավաքագրված գումարների և անդամների միջև միջնորդավճարի և բոնուսների տեսքով բաշխված գումարների և հյուրանոցներին փոխանցված գումարների տարբերության՝ 2,709,300 ԱՄՆ դոլար գումարի ծախսման վերաբերյալ տեղեկություններ առկա չեն եղել:

Չորրորդ սխեմա. ԱՄՆ-ում գրանցված Ակումբն առաջարկել է «Նավային զբոսաշրջության» ծառայություններ, որոնց հասանելիությունը պայմանավորված է բազմամակարդակ ֆինանսական սխեմայով:

«Մասնակցության սկզբնական վճարը 295 ԱՄՆ դոլար է, որից 100 դոլար ամսական անդամավճարը վերածվում է 200 «կրոնիզային դոլարի»: Վերջինս իրական դրամական միավոր չէ և ծառայում է միայն շրջագայության արժեքի առավելագույնը 50%-ի վճարմանը: Բոնուսներից օգտվելու համար անդամը պարտավոր է պահպանել «ակտիվ» կարգավիճակ՝ տարեկան ներգրավելով առնվազն 12 նոր մասնակից, հակառակ դեպքում կորցնում է կոչումները: Ֆինանսական բուրգի մեխանիզմն առավել հստակ արտահայտվում է եկամուտների և կոչումների բաշխման համակարգում: Մասնակիցների թիվային աճը կառուցված է երկրաչափական պրոգրեսիայով (2, 4, 8, 16 և այլն), որտեղ 5 նոր անդամ ներգրավողն ազատվում է սեփական անդամավճարից: Մեկ ամսում 3 և ավելի անդամ ակտիվացնելու դեպքում տրվում են դրամական բոնուսներ (20-40 դոլար): Համակարգը խթանում է շղթայական հավաքագրումը, քանի որ ներգրավված շրջանառության աճին զուգահեռ (3,000-ից մինչև 550,000 դոլար) շնորհվում են տնօրենական տարբեր կոչումներ՝ 300-ից մինչև 55,000 դոլար բոնուսային վարձատրությամբ»:

Ներկայացված սխեմայի շրջանակում, փաստորեն, անդամների եկամուտը ձևավորվում է բացառապես նոր մասնակիցների հավաքագրման և նրանց կողմից կատարվող ֆինանսական մուտքերի հաշվին: Միևնույն ժամանակ, պարտադիր «ակտիվության» պահպանման պահանջը, տարբեր կոչումների աստիճանակարգումը և բոնուսների օգտագործման սահմանափակումները նվազագույնի են հասցնում կուտակված միջոցներով իրական շրջագայություն կատարելու հավանականությունը՝ փաստելով սխեմայի վերաբաշխողական բնույթը:

Այսպիսով, քննարկված բոլոր սխեմաների դեպքում էլ գործողությունների արդյունքում եկամուտները ստացվել են նոր ներգրավված անդամների կողմից ներդրված միջոցներից: Այդ միջոցները ձեռնարկատիրական գործունեության շարունակական ապահովման համար գործունեության մեջ չեն ներդրվել, այլ յուրացվել են մատրիցային սխեմայի վերևի մակարդակում գտնվող անդամների և կազմակերպիչների կողմից: Բացակայում են ձեռնարկատիրական գործունեության, մասնավորապես՝ ապրանքների իրացման, ցանցային մարքեթինգի կազմակերպման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման վերաբերյալ թեկուզև իրական գործունեության բնույթը «քողարկող» տվյալներ:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է փաստել, որ բոլոր սխեմաների դեպքում էլ կազմակերպության կողմից ներգրավված միջոցները, այսինքն՝ գործունեության արդյունքում ստացված եկամուտները ձեռնարկատիրական գործունեության շարունակական ապահովման համար չեն վերաներդրվել, այլ յուրացվել են բրգաձև սխեմայի վերևի մակարդակում գտնվող անդամների և կազմակերպիչների կողմից: Այսինքն, գույքի կամ ծառայության դիմաց վճարում կատարող անձանց առաջարկվող նյութական օգուտը պայմանավորվել է բացառապես նոր ներդրողների ներգրավումից ստացված գույքի (գումարի) հաշվին՝ առանց նշված գույքը իրական ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու

մտադրության: Եվ հետևաբար՝ քննարկված բոլոր սխեմաների դեպքում էլ ընկերության ծավալված գործունեությանը հատկանշական է ֆինանսական բուրգի մեխանիզմի գործողությունը:

Ժամանակակից ֆինանսական բուրգերը վերափոխվել են թվային բարդ էկոհամակարգերի, որոնք գործում են նաև «բլոկչեյն» տեխնոլոգիաների և «սմարթ-կոնտրակտների» միջոցով: Նման պայմաններում դատական փորձաքննության արդյունավետությունը պետք է հիմնված լինի տնտեսագիտական և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի փորձագետների համագործակցության վրա, ինչը թույլ կտա առանցքային հանգույցների նույնականացման միջոցով վերհանել հանցավոր կազմակերպության քողարկված հիերարխիան ու գործառույթային մեխանիզմները:

Վերոնշյալ միջմասնագիտական մոտեցումը դատական տնտեսագիտական փորձաքննությունը վերածում է ցանցային նույնականացման այնպիսի գործընթացի, որում ֆինանսական հոսքերի մոդելավորման օգնությամբ բացահայտվում են սխեմայի առանցքային դերակատարները: Փորձագիտական գործիքակազմերը հնարավորություն են ընձեռում առանձին գործարքների հետազոտման միջոցով վերականգնել հանցավոր սխեմայի ամբողջական շղթան: Արդյունքում, իրավապահ մարմիններին են ներկայացվում հստակ ապացույցներ՝ ֆինանսական հոսքերի ուղղությունների և հանցավոր մեխանիզմների գործողության և կառուցվածքի վերաբերյալ:

Այսպիսով, վերը բերված օրինակների վերլուծության հիման վրա գալիս ենք այն եզրահանգման, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ֆինանսական բուրգը անհրաժեշտ է սահմանել որպես գործունեության տեսակ, որն իր *տնտեսագիտական բնույթով* հակասում է քաղաքացիաիրավական շրջանառության բարեխղճության սկզբունքներին: Տնտեսագիտական տեսանկյունից նույնականացված նման գործունեությունը պետք է ուղղակիորեն արգելվի քաղաքացիաիրավական նորմերով, ինչը թույլ կտա իրականացնել վերահսկողություն և կիրառել պատժամիջոցներ (օրինակ՝ գործունեության կասեցում կամ լուծարում) դեռևս այն փուլում, երբ սխեման չի հասցրել վերաճել զանգվածային քրեական հանցագործության: Այդպիսով, քաղաքացիաիրավական արգելքը կծառայի որպես տնտեսական զսպաշապիկ, իսկ քրեական պատասխանատվությունը կմնա որպես ծայրահեղ միջոց՝ առավել վտանգավոր դրսևորումների համար:

Գրականության ցանկ

1. Legal Information Institute: «Ponzi scheme» [Last reviewed in 03.2022 by the Wex Definitions Team], (URL:https://www.law.cornell.edu/wex/ponzi_scheme?utm_source=chatgpt.com.)
2. Pihu F., Duoyong S. Zaiwu G. (2019), "A Case Study of Pyramid Scheme Finance Flow Network Based on Social Network Analysis". Sustainability, 11(16), 4370 (<https://doi.org/10.3390/su11164370>).
3. Uppiah V. (2018), "A critical examination of the regulation of Ponzi scheme in Mauritius". International Journal of Law and Management, Vol. 60 No. 6 pp. 1393–1400, (<https://doi.org/10.1108/IJLMA-08-2017-0201>).

4. ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 282, 4-րդ մաս:
5. FTC Business Guidance Concerning Multi-Level Marketing (հիմնված In re Amway Corp., 93 F.T.C. 618 (1979) դատական նախադեպի վրա):
6. Կանադայի «Մրցակցության մասին» օրենք (Competition Act (R.S.C., 1985, с. С-34), Section 55 and 55.1):
7. Մեծ Բրիտանիայի «Անբարեխիղճ առևտրից սպառողների պաշտպանության» կանոնակարգ (Consumer Protection from Unfair Trading Regulations 2008):

ПРОБЛЕМА ФИНАНСОВЫХ ПИРАМИД В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ В КОНТЕКСТЕ МЕЖДУНАРОДНЫХ НАУЧНЫХ ПУБЛИКАЦИЙ

Мамиконян К.О., Степанян Л.С.

Финансовые пирамиды представляют собой одну из наиболее распространённых форм мошенничества в современной финансовой системе, оказывающую существенное негативное воздействие на экономическую устойчивость инвесторов и финансового рынка в целом. В наиболее институционализированных формах данного явления выплата доходов участникам осуществляется не за счёт реальной экономической деятельности, а исключительно посредством перераспределения средств, поступающих от вновь привлечённых участников (схема Понци). Будучи замкнутой системой перераспределения капитала, такая модель может функционировать лишь при постоянном притоке новых денежных средств и не обладает самостоятельными механизмами создания экономической стоимости.

В статье особое внимание уделяется критериям идентификации финансовой пирамиды как экономического явления. Обосновывается необходимость разграничения её экономических характеристик и законодательных признаков в целях более точной правовой квалификации соответствующей деятельности. Анализ международных научных публикаций и зарубежного опыта регулирования показывает, что противодействие финансовым пирамидам может эффективно осуществляться посредством законодательства о защите прав потребителей, обеспечения добросовестной конкуренции, а также механизмов судебного правоприменения. Авторы приходят к выводу, что предупреждение и пресечение подобной деятельности целесообразно осуществлять преимущественно в гражданско-правовой и экономико-правовой плоскости на ранних стадиях её проявления, до возникновения оснований для уголовно-правового вмешательства.

Ключевые слова: финансовая пирамида, схема Понци, финансовое мошенничество, экономическое явление, защита прав потребителей, экономико-правовое регулирование, превенция.

THE PROBLEM OF FINANCIAL PYRAMIDS IN THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF INTERNATIONAL SCIENTIFIC PUBLICATIONS

Mamikonyan K., Stepanyan L.

Financial pyramids are among the most widespread forms of fraud in the modern financial system, exerting a significant negative impact on the economic stability of investors and on the financial market as a whole. In the most institutionalized forms of this phenomenon, payments of income to participants are made not through real economic activity, but exclusively through the redistribution of funds received from newly recruited participants (the Ponzi scheme). As a closed system of capital redistribution, such a model can operate only under conditions of a continuous inflow of new funds and lacks independent mechanisms for creating economic value.

The article places particular emphasis on identifying the criteria for recognizing a financial pyramid as an economic phenomenon. At the same time, it substantiates the need to apply separate economic and legal legislative definitions when characterizing this phenomenon. An analysis of international scientific publications and foreign regulatory experience demonstrates that combating financial pyramids can be effectively carried out through consumer protection measures, the promotion of fair competition, and judicial enforcement mechanisms. The authors conclude that the prevention and suppression of such activities should primarily be implemented within the framework of civil law and economic law at the early stages of their manifestation, before grounds arise for criminal-law intervention.

Keywords: *financial pyramid, Ponzi scheme, economic phenomenon, consumer protection, economic and legal regulation, prevention.*

Ներկայացվել է խմբագրության՝ 27.02.2026

Ընդունվել է տպագրության՝ 11.05.2026